

**ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**  
**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**  
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 13/3**  
**2 մարտի 2018թ.**

Քննարկվեց «ԷՍԴԻԷՄ» ՍՊԸ բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ 29.12.2017թ. N1013148 ակտի դեմ:  
ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 27.10.2017թ. N1013148 հանձնարարագրի համաձայն «ԷՍԴԻԷՄ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև՝ ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ 29.12.2017թ. N1013148 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ):

Քննարկման ընթացքում պարզվեց, որ ընկերության կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ 29.12.2017թ. N1013148 ակտը վերադասության կարգով բողոքարկվելուց բացի, նշված ակտի դեմ հայցադիմում է ներկայացվել նաև ՀՀ վարչական դատարան:

ՀՀ վարչական դատարանի 20.02.2018թ. որոշման համաձայն (վարչական գործ թիվ ՎԴ/1600/05/18) «ԷՍԴԻԷՄ» ՍՊԸ հայցադիմումն ընդդեմ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի՝ 29.12.2017թ. N1013148 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունվել է վարույթ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի՝ դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ:

Նույն օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ «ԷՍԴԻԷՄ» ՍՊԸ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Հարկային օրենսգրքի 443-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

«ԷՍԴԻԷՄ» ՍՊԸ-ի բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**